Հանրաքվեի քարոզչության հետ կապված հարցերը կարգավորվում են «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ գլխում ամրագրված դրույթներով, որտեղ, ի թիվս քարոզչության այլ կանոնների, կարգավորված է նաև քարոզչություն կատարելու և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելու արգելքի հիմնական կանոնները: Մասնավորապես,՝

- Օրենքի 17-րդ հոդվածի 14-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ «Արգելվում է քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել՝

1) հանրային ծառայողներին, առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների, ***ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս***.»:

Վերոգրյալը նշանակում է, որ ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողներին արգելվում է քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել **իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս**: «Ի պաշտոնե հանդես գալու» եզրույթն ինքնին նշանակում է, որ անձը չի կարող քարոզչություն կատարել կամ ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել որպես ուսումնական հաստատության, նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատող ո՛չ իր լիազորություններն իրականացնելիս, ո՛չ էլ իր դիրքով պայմանավորված կամ իր դիրքի վկայակոչմամբ հանդես գալիս:

Անհրաժեշտ է ձեռնպահ մնալ քարոզչություն կատարելուց նաև այն դեպքում, երբ իր խոսքը կընկալվի իբրև ուսումնական հաստատության աշխատողի (մասնավորապես՝ ծնողական ժողովներ, ծնողների հետ հավաքներ, քարոզչական նյութեր աշակերտներին կամ նրանց ծնողների, կոլեգաներին տրամադրել, աշակերտներին կամ սաներին, նրանց ծնողներին ներգրավել քարոզչական հավաքներին, կամ այլ քարոզչական միջոցառումներին և այլն):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ - Նշվածը չի կարող ընկալվել որպես տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում ընդգրկվելու կամ ընտրողների գրանցման տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետ ընդգրկվելու հարցերում խոչընդոտ: Ընդհակառակը, տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում ընդգրկվելու կամ ընտրողների գրանցման տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետ նշանակվելու դեպքում նրանք պարտավոր են բարեխղճորեն և օրենքների պահանջների խստիվ պահպանմամբ մասնակցել հանրաքվեի գործընթացին՝ նորից զերծ մնալով քարոզչական գործունեությունից:

- Օրենքի 28-րդ հոդվածի 9-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 21-րդ հոդվածի համաձայն՝

«2. Հանրության համար տեսանելի քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են փակցվել միայն՝

1) հատուկ այդ նպատակով առանձնացված տեղերում, վճարովի գովազդային վահանակներում, ընտրական շտաբների վրա.

2) ֆիզիկական անձանց համաձայնությամբ՝ նրանց պատկանող կամ նրանց տիրապետման ներքո գտնվող շենքերի, շինությունների (***բացառությամբ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի, հանրակրթական դպրոցների***, բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի, հասարակական սննդի կամ առևտրի օբյեկտների), տրանսպորտային միջոցների (բացառությամբ հասարակական տրանսպորտի և տաքսու) վրա կամ դրանց ներսում: ...

3. Նախընտրական քարոզչությունն սկսելուց 10 օր առաջ համայնքի ղեկավարը պարտավոր է համայնքի տարածքում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնել (***բացառությամբ հանրակրթական դպրոցների***)՝ սահմանելով այնպիսի պայմաններ, որոնք համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար կապահովեն հավասար հնարավորություններ (հավասար մակերես): Սույն լիազորությունը համայնքի ղեկավարի համար պարտադիր լիազորություն է: ...»:

Վերոգրյալը նշանակում է, որ ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատակիցներին քարոզչության կատարումից և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելուց զերծ պահելու համար օրենսդիրը քարոզչության իրականացման համար տրամադրվող շենքերի, շինությունների շարքում որպես բացառություն սահմանում է պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերը, որոնց մեջ մտնում են նաև նախակրթական ուսումնական հաստատությունները, հանրակրթական դպրոցների շենքերը: Ավելին, «***հանրակրթական դպրոցներ***»-ը օրենսդիրն առանձնակի է շեշտել՝ դրանց տակ ի նկատի ունենալով ոչ միայն այն հանրակրթական դպրոցները, որոնք զբաղեցնում են «պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերը», այլ ցանկացած հանրակրթական դպրոց՝ քարոզչությունից զերծ մնալու հարցում կարևորելով գործունեության տեսակը, ոչ թե հանրակրթական դպրոցների կողմից զբաղեցվող շենքերի սեփականության ձևը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշ համայնքներում ժողովներ, հանդիպումներ և հանրաքվեի հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով քարոզչության կողմերին տրամադրվող դահլիճ (շինություն) առկա է միայն հանրակրթական ուսումնական

հաստատություններում, օրենսդիրը սահմանել է, որ հանրակրթական ուսումնական հաստատությունների դահլիճները քարոզչության կողմերին կարող են տրամադրվել միայն ժամը 18:00-ից հետո կամ ոչ աշխատանքային օրերին և միայն այն դեպքերում, եթե տվյալ համայնքում (Երևանի վարչական շրջանում) գոյություն չունեն քարոզչության անցկացման համար համապատասխան այլ դահլիճներ:

Միաժամանակ, Օրենքի և Ընտրական օրենսգրքի կանոնակարգումների համաձայն՝ ընտրական հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող անձինք: Տեղամասային ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու համար անձը պետք է ունենա նաև որակավորման վկայական:

Օրենսդիրը սահմանել է նաև այն անձանց ցանկը, ովքեր չեն կարող ընդգրկվել ընտրական հանձնաժողովների կազմում: Այսպիսով, ընտրական հանձնաժողովի անդամ չեն կարող լինել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-154.6-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների, ինչպես նաև դիտավորությամբ կատարված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների համար դատվածություն ունեցող անձինք: Տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամ չեն կարող լինել Ազգային ժողովի պատգամավորները, նախարարները և նրանց տեղակալները, համայնքների ղեկավարները, մարզպետները և նրանց տեղակալները, դատավորները, դատախազները, քննչական մարմիններում ծառայողները, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատական ակտերի հարկադիր կատարման, քրեակատարողական, պրոբացիայի, փրկարար ծառայություններում ծառայողները, զինծառայողները, վստահված անձինք, ընտրություններին մասնակցող կուսակցության, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուի լիազոր ներկայացուցիչները, դիտորդները, թեկնածուները: Տարածքային ընտրական հանձնաժողովների անդամ չեն կարող լինել նաև ավագանու անդամները:

Վերը նշված ցանկում ուսումնական, նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների աշխատողները ընդգրկված չեն, ինչը նշանակում է, որ ընտրական իրավունք և ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական ունեցող ուսումնական հաստատությունների աշխատողները կարող են ընդգրկվել ընտրական հանձնաժողովների կազմերում:

Տարակարծության տեղիք կարող է տալ այն հարցը, թե արդյո՞ք վերոնշյալ սուբյեկտները, ընդգրկված լինելով ընտրական հանձնաժողովներում՝ որպես հանձնաժողովի անդամներ կամ տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետներ, կարող են քարոզչություն իրականացնել: Սակայն օրենսդիրն այդ հարցին ևս տվել է սպառիչ պատասխան: Օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը հղում է կատարում Ընտրական օրենսգրքին, որի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ընտրական հանձնաժողովի անդամն ընտրական հանձնաժողովում գործում է անկախ և չի ներկայացնում իրեն

նշանակողին»: Քաղաքական զսպվածության և անկախության վերաբերյալ այս օրենսդրական կարգավորումը վերաբերում է նաև տեխնիկական սարքը սպասարկող մասնագետներին: Ավելին, Օրենքի 17-րդ հոդվածի 14-րդ մասի 4-րդ մասով հստակ ամրագրված է, որ «արգելվում է քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել՝ (...) ընտրական հանձնաժողովների անդամներին.»:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և «Ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի կարգավորումների համակարգային վերլուծության հաշվառմամբ՝ ուսումնական հաստատությունների, նախադպրոցական և հանրակրթական հաստատությունների աշխատողներին արգելվում է քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել, որի խախտման դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 40.8-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելու իրավունք չունեցող անձանց կողմից նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելը և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը առաջացնում են տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով, և պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով: